

ՀՀ Անկախության տոնին նվիրված միջոցառումներ Վարդենիս քաղաքում

20.09.2017

Մեպտեմբերի 20-ին Վարդենիս քաղաքում տեղի ունեցան միջոցառումներ՝ նվիրված Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակման 26-րդ տարեդարձին:

Միջոցառումներին մասնակցում էին ՀՀ ԱԾ պատգամավորներ, մարզի ուժային կառույցների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, դպրոցականներ, հյուրեր, վարդենիսցիներ:

Վերջիններս, մարզպետ Կարեն Բոթոյանի ուղեկցությամբ նախ ծաղիկներ խոնարհեցին Մեծ Հայրենականում և Արցախյան հերոսամարտում իրենց կյանքը նվիրաբերած վարդենիսցի քաջորդիների հիշատակն հավերժացնող հուշարձաններին, ապա Վարդենիսի Մուրբ Աստվածածին եկեղեցում մասնակցեցին Հանրապետական Մաղթանքի արարողությանը, որն անցկացվեց Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Կիրակոս վարդապետ Դավթյանի ձեռամբ և հոգևոր դասի մասնակցությամբ: Պետական այրերը այնուհետև ընդունեցին տոնական շքերթը. քաղաքի կենտրոնական փողոցով հանդիսավոր երթով անցան Վարդենիսի և հարակից համայնքների դպրոցականները և ՀՀ ՁՈՒ Բանակային երկրորդ կորպուսի մարտիկները:

Միջոցառման մասնակիցները օգտվեցին բանակային բացազատված դաշտային խոհանոցից, դիտեցին ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային վարչության համապատասխան ստորաբաժանման ցուցադրական ելույթները, ինչպես նաև Վարդենիս քաղաքի ստեղծագործական կենտրոնների սաների քանդակագործական, գեղանկարչական, ձեռագործ և այլ բնույթի ստեղծագործական աշխատանքները՝ նվիրված ՀՀ Անկախության տարեդարձին: „ ՀՀ Անկախությունը արժեվորվում է այնքանով, որքանով որ հայ ժողովուրդը դարեր շարունակ գուրկ է եղել պետականությունից: Մեր սերունդը երջանիկ է, քանի որ ձեռք է բերել անկախություն: Մենք այսօր հպարտ ենք, որ ունենք Հայոց Եռագույնը, ՀՀ Ջինանշանը և պետական Օրհներգը: Սրանք անփոխարինելի արժեքներ են, որը մենք պարտավոր ենք պահպանել և փոխանցել գալիք սերունդներին, - իր շնորհավորանքի խոսքում նշեց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը:

Տոնակատարությունը եզրափակվեց հայկական էստրադայի աստղերի ներկայացրած համերգային ծրագրով: